

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՕՇԱԿԱՆԻ ԱՆՏԻՊՆԵՐԷՆ

ՆԱՐԵԿ

•
Ե.

ՆԱՐԵԿԱՑԻՒՆ ՄԻՒՍ ԳՈՐԾԵՐԸ

10. ՄԵԿՆՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՅՆ ԵՐԳՈՅՆ ՍՈՂՈՄՈՆԻ: Նարեկացիին անդրանիկ աշխատությունը: Շահական հն նախաբանն ու վերջաբանը իրենց յիշատակություններով: Գործը իբր թափանցում միջակ է: Իբր ցուցադրում (exposé) ճապաղ:

Հետաքրքրական է լիզուն ու պարզ է անհամեմատ քան Նարեկացիին միև դարձերուն լիզուն:

20. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽԱՉԻՆ ԱՊԱՐԱՆԻՑ: Ասիկա կատարեալ գիւցաղներգություն մըն է: Նարեկացի մեզի կը փորձէ ներկայացնել մարդեր (որսնք կայսրեր հն), եպիսկոպոսներ (որսնք սուրբեր հն), դէպքեր որսնք իրականություն հակադրւնէն կ'ազատին ու կը մխուխ հրաշալիին մէջ:

Պատմությունը կարելի է ամփոփել: 983 ին խաչ մը կը զետեղուի Ապարանից Ուխտի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ: Անա հիմնական նիւթը: 3-4 էջ կը նուրբէ Նարեկացիին եղելությունը կանխող ժամանակին, վաթիլ ու կոստանդին կայսրերուն: Նոյնքան մըն ալ Մովսէս աշխարհէն Պսիխ գաղթող ազնուականին: Քանի մը հաստատ էր բացատրեն հրաշքները որսնք կը գործունին այդ գաղթականին երկրէն բերած հողովը: Հետաքրքրությունը ինքնակալներուն: Կը վարձատրեն գաղթականը անոր նուիրելով խաչափայտէն կտոր մը որ կը «հաստատուի» ձեռակերտ խաչի մը մէջ: Յետոյ չինությունը այս խաչին: Վերադարձը Մովսէս զատուր: Շինությունը գամբարանի: Խաչին զետեղումը նախ Ս. Կորապետի, յետոյ Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ:

Անա այս նախանիւթովն է որ Նարեկացի կը գրէ պատկանելի գրքոյի մը,

ուր բացատրությունները կը հաւաստեն Աղօթամատեանին ամենէն չքեղներուն: Ուր եկեղեցական ճարտարապետությունը ոճի, բառի կը վերածուի: Ուր մանաւանդ սակիի և արծաթի, բենեզի և մետաքսի զարմանալի հարստություն մը շլացնող է ու խորապէս ապուրիչ: Հին դիւցաղներգությունը մօտ փորձուած այս առատությունը, հարստությունը անհամեմատ վեր է խորհրդիին հանդարտ ու պատմական մնալ ուզող եղանակէն:

Արտաքին տարրերու այս manielement արտակարգ արուեստի մը սլալալը կը դադրի ծիծաղելի, այլանդակ ըլլալէ, քանի որ հեղինակը նորօրինակ համադրություններով, բարդություններով, խտություններով կը քալէ: Իր emphase-ը բառերէ աւելի ակնարկություն, ներքին թրթուածի շափազանցություն մըն է: Վիճակները գերադրելու այս արամադրությունը, զանաք զարգարուն, շողարձակ ընծայելու այս ճարտարանքը իւրայայտուկ հետադրություն մըն է որուն կը սպասուարեն խորատես արուեստագէտի բնագրը, սճը, հզօր զգայարանք մը, բառերը իբրև սլալալ գործածելու կարողություններ:

Դէպք, գիտողություն, իրականություն բոլորն ալ կը կորսուին բառերու այս լայն հեղեղին մէջ, բայց թափանցիկ հեղուկի մը մէջ ընկղմող իրերուն ձևափառությունները կը յամառին անոնց հետէն: Քանի մը առջով Նարեկացիին սուած է Պսիխ մը որ խորհրդիին երանդակերաէն գերադանց է: Պատահական երազներ իրեն համար միջոցներ են որպէսզի անիկա նկարագրէ պարտէզներ ու ծառեր, որոնց գեղեցկությունը կ'անցնի Փարպիցիին նշանաւոր նկարագրություններէն:

Ու իր մարդերը նորէն, որսնք կը տարուին դիւցաղական զգեստաւորումէն, որսնք կը մեծցուին բայց չեն դադրի մարդ մնալէ:

Ոչ մէկ թարգմանություն կը յաջող այս ոճին զօրությունը փախադրել:

Պատմության կցում է ներքող մը, որ գծախառնար զուրկ է մեծ գեղեցկություններէ: Խաչին վրայ ներդրական մը, աստուածաբանական սենեկներով մշտապէս կառավարում, կը յանգի ի վերջոյ

ոճի մարզանքի մը, յախուռն, աւաւցիկ
ու անտանելի:

3⁰. ՆԵՐՔՈՂ ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ: Ազօթամատեանին շեշտովը գրուած գովա-
սանական օրհնարանութիւն մըն է ուղ-
ղուած Ս. Աստուածամօր: Նոյն կշռաւոր
արձակը: Բայց քիչ տեղի մէջ գրադէտը
հասած է իրական ստեղծութիւն: Հսն ուր
կը կենայ մեկնելէ մարդեղութեան խոր-
հուրդը և ուղղակի դիմառնութեամբ կը
խօսի, հոն փոխարեքութիւնն ու պատ-
կերը անմիջապէս կը պատասխանեն: Ու
այդ էջերը կէսէն աւելին կը գրուեն
ներքողին: Յայտնի է թէ այս բխումը
չէր կրնար հարապատ մնալ իր ամբողջ
մատերուն մէջ: Բայց բուական բան կա-
րելի է գտակ ուր ինքնատիպ է ու ան-
հաւասարելի՝ դեղեցկութեամբ:

Աստուածածնին հանդէպ վանականի գե-
րագրգռուած զգայնութիւն մը կը պակսի
ասանց: Իր միտքէն աւելի իմացականու-
թիւնն է որ երեան կը հանէ Աստուծոյ
մօրը բոլոր զանակները:

Ու երկինքն ու երկիրը, դաշանն ու
լեռները, աստղերն ու ծաղիկները իրա-
րու կը խառնուին, կը հալածուին որ-
պէսզի իրենց պատկերներէն փշուրներ
տան բանաստեղծին: Ներքողը ունի հա-
ղորդականութիւն և զգածուած շեշտ:
Նարեկացիին յաջող գործերէն է:

Նշանաւոր է նաև իր յիշատակագիրը:
4⁰. «ՆԵՐՔՈՂ ԱՌԱՔԵԼՈՅ» ԵՒ «ՅԱԿՈ-
ԲԱՅ ՄԵՐՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ»: Այս երկու
ճառերն ալ նոյն երակէն բխած են,
որոնց մասին ըսինք: Բայց այլևս եղա-
նակն է որ կը տիրէ:

Գրագէտը ըսելու իր ձեւը անպատիժ
կերպով կը գործածէ ու կ'ընէ զեղուն
նախադասութիւններ, որոնք աստուա-
ծարանութեամբ, մեկնողարանութեամբ,
երբեմն ալ ստեղծումով ազդորդած են:

Ասանք ոչինչ կ'աւելցնեն Նարեկացիի
արժանիքներուն:

5⁰. ԳԱՆԶ: Երեք են թիւով. 1⁰. Ի Գա-
լուս Հոգւոյն Մբոյ. 2⁰. Ի Սբ. Եկեղեցի.
3⁰. Ի Սուրբ Խաչն Աստուածընկալ:

Ասանք արձակ քերթաւորներ են, ու
իբր այդ Նարեկացիին ամենէն յաջող
արտադրութիւններէն:

Բանաստեղծը հոս հազուադէպ բախար
ունի լիւրի վրայ կեդրոնացում: Ու այդ
նիւթը վերջապէս Ազօթամատեանը գրա-
ւող մեղքերուն թուումը չէ: Երեկայու-
թիւնը ազատ ասպարէզ ունի միջոցնե-
րէն վազելու: Պատմութիւն, մարդեր,
աստուածութիւն անոր կուտան թելա-
գրանք նորանոր որակումներ, խառնու-
մներ, շարափայլումներ արձակելու: Ամե-
նէն քիչ նեղուած տեղն է այս գետինը
ուր թափ կուտայ զարմանահրաշ իր պատ-
կերներու հեծելագօրքին:

Լեզուն կը հաւատարի նիւթին: Աւելի
պարզ քան Ազօթամատեանինը, աւելի
կայծկիտուն քան ճառերունը, մանաւանդ
խառնած նիւթին շուրջը մնալ կրնալու
պարտադրութեամբ մը, Գանձերուն մէջ
Նարեկացիին ոճը կը հասնի իր գերագոյն
շքեղութեան:

Հարկ չկայ քննելու անոնց խորքը:

6⁰. ՏԱՂԵՐ: Բայց Նարեկացիին պէտք
է տեսնել մանաւանդ իր առդերուն մէջ:

1⁰. Ծննդեան

2⁰. Յայտնութեան

3⁰. Բառասնիցն

4⁰. Ի Յարութիւնն Ղազարու

5⁰. Յարութեան

6⁰. Համբարձման

7⁰. Գալստեան Հոգւոյն

8⁰. Եկեղեցւոյ

9⁰. Վարդապետին:

Այս վերնագիրները տաղաւարներու
անուններ են նոյն տան: Ու յայտնի է
թէ անոնք եկեղեցական երգեստութեան
մաս կազմած են տանին: Չեմ գիտեր
հիմա կ'երգուին թէ ոչ:

Յաւակնելեմ:

1⁰. Բանաստեղծութիւն: Կրօնական նկա-
րագիրով այդ քերթաւորներուն խորը
գոյութիւն ունի յաւիտենական ֆնարա-
կանութիւն մը, որ տեղ տեղ գիտուն, տեղ
տեղ ժողովրդական թոյլ գնացքով մը կը
լեցնէ բոլոր տեղերը: Քիչ են տարբեր
որոնք գաւառական կամ բարեպաշտական
յաւակնութիւններ կը մատնեն: Բանաս-
տեղծը ազանովարար ոչինչ կ'աւել
սոր-
վեցնել անոնցմով: Միւս կողմէն անոնք
ազատ են ճարտար ու խղճամիտ ճաշակի
մը յաղթահարող կնիքէն:

ԹԵՔԵԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՁՐ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՅԻՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

1965 թվականին կը լրանայ Մեծ Եղեռնի յիսնամեակը:

Մոտ յիսուն տարի առաջ, բարբարոս բուրքերու ձեռամբ, ամբողջ Արեւմտահայու-
քիւնը անմիտուեցաւ իր բնաշխարհէն եւ խողխողուեցաւ վայրագօրէն: Սպանդէն մագա-
պաւրծ նոզողքամ մասը դարձաւ Ափիւռք, հողմանալով ու ցիրուցան: Դարձաւ տարա-
սնկուած ծառ, օտարին գուրին ապաւինած, հայրենի հողին բարիքէն եւ դատաւոր մեա-
կոյրի օնախնեւէն զրկուած:

Ամէն տարի, առանց դաւանական եւ կոստակցական խտրութեան, պոսեան շուքով
կը յարգուի մեր մեկուկէս միլիոն նահատակներուն յիշատակը: Բայց անհրաժեշտ է որ
Ապրիլեան Եղեռնի յիսնամեակը կատարուի համազգային շուքով, արժանաւայել պատրաս-
տութեամբ:

2⁰. Խորհրդապաշտօնիւն: Տաղերը գլոր-
ւած են միշտ օրուան խորհուրդին ի
սպաս: Անոնք բացատրող չըլլալուն
հետ, թեւադրող են ու մութ: Տաղը կու
տայ, կ'աւելնայ տաղին երբեմն իբր հա-
կադրութիւն, երբեմն իբր լրացուցիչ:
Բայց երկու վիճակներու միջեւ լուսաւա-
րող կարգաւորող տարրերը ջնջուած են:
Ցատկող եղանակ, որ նոյնն է ժամանա-
կակից խորհրդապաշտութեան ալ մէջը:

3⁰. Երմեւտականութիւն: Յայտնի է թէ
անոնք երգուելու համար գրուած են: Այս
է պատճառը որ բառական այնքան մի-
ջոցները կը շահագործուին ստանաւորը
երգող ընելու համար: Այս մտահոգու-
թիւնը մենք արդէն կը ճանչնանք իր
արձակէն: Բայց անոր ծայրայեղութիւնն
է որ կը հաստատենք ստանաւորին մէջ:

4⁰. Այլաբանութիւն: Խորհուրդին հա-
մար ամբողջ կառուցում մը ու յետոյ
անոր լուծումը, բայց երբեք արձակու-
նակ: Վկայ՝ սոյլիկին պարագան:

5⁰. Պատկեր: Ամէն կալուածէ՛ւ Բայց
մասնաւորաբար ժողովրդական կալուած-
էն: Մտղիկներ ու հովեր, ծովեր ու եր-
կինքներ, կարասաններ ու արեւներ, եր-
բեմն բառախաղ, երբեմն գիւտ:

6⁰. Տաղաշարութիւն: Ամէն շափով
Բայց նշանակալից է սա շափը

Ես ձայն գառիւծուն տսեմ՝

Որ գոչէր ի քառաթեւին,

Ի քառաթեւին գոչէր,

Ձայն տանէր ի սանդարտ-
մասան...

Ասիկա Բաշակի չափն է գրեթէ:

7⁰. Լեզու: Նարեկացին հաս ունի եր-
գեր ուր ժողովրդական տարրեր կը դիտ-
ուին: (Այս է պատճառը որ անիկա կը
կոչուի շատերէ իբր անդրանիկը մեր
աշուղներուն): Միւս կողմէն տաղերու
վրայ աշխատանքի պարտաւորութիւն մը
գինքը բաւարարին անտարրեր կ'ընէ քե-
րականութեան: Բայց բառերու ձայնա-
կան աւելցնելով երգութիւն մը կը ճարէ
այդ լեզուն համար քաղցր նաւագայնու-
թիւն: Բայց փոխարեւորութեանց անդի-
մադրելի բխում մը ծաղիկներով կը բանի
այդ տաղերը: Բայց ընդհանուր բանաս-
տեղծութեան մը անտակի հրապարակը կը
ծարէ անոր բաւարժ երգերէն ու խա-
րխիւներէն:

Նարեկացին կը վերագրուին նաեւ
քանի մը անվաւեր գործեր:

(Վերջ՝ 5)

Յ. ՕՇԱԿԱՆ